

ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹ. Մեկնությունն ի «Վերլուծական» Արիստոտելի, Հին հայերեն բնագիրը հրատարակության պատրաստեց, անգլերեն թարգմանեց և առաջաբանն ու ծանոթագրությունները գրեց Արամ Թոփչյանը, «Բրիլ» հրատ., Լայդեն, Բոստոն, 2010, X–222 էջ:

DAVID THE INVINCIBLE, *Commentary on Aristotle's Prior Analytics*. Old Armenian Text with an English Translation, Introduction and Notes by Aram Topchyan (Philosophia Antiqua vol. 122 = Commentaria in Aristotelem Armeniaca. Davidis Opera, vol. 2), Brill, Leiden-Boston, 2010, pp. X–222.

Գրախոսվող գիրքը լույս է տեսել *Commentaria in Aristotelem Armeniaca. Davidis Opera* («Արիստոտելի հայկական մեկնություններ. Դավթի երկերը») շարքով, որ ընդգրկելու է հինգ հատոր: Առաջինը¹ Դավթի Անհաղթի փիլիսոփայական ժառանգության հայտնի մասնագետների հողավածների մի ժողովածու է և որոշ առումով նախաբան ողջ շարքի համար: Երկրորդը՝ մեր խնդրո առարկան, «Մեկնությունն ի «Վերլուծական» Արիստոտելի» երկն է: Այնուհետև սպասվում է ևս երեք հատոր՝ «Սահմանք իմաստասիրության», «Վերլուծություն «Ներածութեանն» Պորփիրի» և «Մեկնություն «Ստորոգութեանն» Արիստոտելի»: Վերջին երեք գործերի հին հունարեն սկզբնագրերը հասել են մեզ, ի տարբերություն առաջինի՝ «Վերլուծականի» («Առաջին անալիտիկայի») մեկնության: Եվ թեպետ այս հանգամանքը խիստ դժվարացնում է երկի հին հայերեն տարբերակի հրատարակության պատրաստումն ու թարգմանությունը, Արամ Թոփչյանն իր առաջադրանքը գերազանց է կատարել:

Գիրքը բաժանված է երեք հիմնական մասի. առաջաբան, հայերեն քննական բնագիր ու անգլերեն թարգմանություն, որն ուղեկցվում է բովանդակալից ծանոթագրություններով, և հավելվածներ ու բառարաններ, որոնք արժեքավոր են թե՛ փիլիսոփայական, թե՛ լեզվաբանական տեսանկյունից:

Առաջաբանում (էջ 1–28) Թոփչյանը, մեկնությունն իր մշակութային միջավայ-

րում՝ VI դարի այլքսանդրյան փիլիսոփայական դպրոցում ներկայացնելուց հետո, քննարկում է հայերեն տարբերակի հետ կապված հարցեր, ինչպես՝ թարգմանության լեզվական առանձնահատկությունները և թարգմանչի ու հեղինակի խնդիրները (երկը վերագրվել է նաև Դավթի ժամանակակից Էլիասին):

Թարգմանությունը պատկանում է հունարեն դպրոցին, և բանասերներն այն ընդգրկում են հունարեն թարգմանությունների երրորդ խմբում: Ուստի այն թվագրվում է VII դարի առաջին կեսով (Հ. Մանանդյան) կամ VI դարով (Ս. Արևշատյան): Այս առթիվ Թոփչյանը միայն հղում է նշված մասնագետների կարծիքները՝ առանց դրանցից մեկին նախապատվություն տալու: Այնուամենայնիվ նա նշում է լեզվական հատկանիշներ, որոնք հատուկ են Դավթի բոլոր չորս երկերի հայերեն թարգմանություններին և վկայում են, թե դրանք հավանաբար մեկ թարգմանչի գործ են: Թոփչյանն անդրադառնում է նաև թարգմանչի անձնավորության խնդրին: Նրա կարծիքով՝ Դավթը հազիվ թե եղած լինի իր իսկ երկերի թարգմանիչը, և դրանք չեն թարգմանվել նրա վերահսկողությամբ, քանի որ թարգմանություններում առկա են որոշ մանր սխալներ: Դրանք տեղ չէին գտնի հայերենում, եթե նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցած լիներ աշխատանքին:

Թոփչյանը հետաքրքիր դիտողություններ է անում նաև մեկնության հեղինակային պատկանելության հարցի շուրջը: Արիստոտելի նույն երկի Էլիասի հունարեն մեկնության մի հատվածի տպագրությունից հետո (1961 թ.) որոշ մասնա-

¹ V. Calzolari – J. Barnes (eds.), *L'Oeuvre de David l'Invincible* (Philosophia Antiqua vol. 116 = Commentaria in Aristotelem Armeniaca. Davidis Opera, vol. 1), Brill, Leiden-Boston, 2009.

գետներ հայերեն թարգմանությամբ մեզ հասած մեկնության հեղինակ են համարել Էլիասին: Պահպանված հունարեն հատվածն ընդգրկում է առաջին պրակը և երկրորդի մի մասը, և, հարկավ, բազմաթիվ բառացի զուգահեռներ կան Էլիասի գրվածքի ու հայերեն ձեռագրերում Դավթին վերագրված մեկնության միջև: Այդ դուռնադուռ տարբերություններն էական են ու ավելի շատ, քան նմանությունները, և դա Թոփչյանին թույլ է տալիս հանգելու այն համոզիչ եզրակացությանը, թե հայերենը չի կարող լինել Էլիասի երկի թարգմանություն: Այլ խոսքով՝ արդարացված չէ Էլիասին հայերեն մեկնության հունարեն սկզբնագրի հեղինակ համարելը, և այն պետք է վստահորեն վերագրել Դավթին: Իսկ նշված նմանությունները երևի արդյունք են այն բանի, որ երկու երկերի հիմքում եղել է նույն աղբյուրը:

Առաջաբանն ավարտվում է մի ծավալուն գլխով, որը նվիրված է Դավթի մեկնության հայերեն ձեռագրերի դասակարգմանը: Թոփչյանն ուսումնասիրել է 28 ձեռագիր (ամենահինը՝ XIV դարի): Դրանցից 27-ը պահվում են Մատենադարանում, իսկ մեկը՝ Փարիզի ազգային գրադարանում: 5 ուրիշ ձեռագիր նրան մատչելի չեն եղել:

Առաջաբանին հետևում են մեկնության քննական բնագիրը և անգլերեն թարգմանությունը (էջ 29–131): Դավթի երկը բաժանված է 14 պրակի, սակայն, ինչպես նկատում է Թոփչյանը (էջ 3), այն անավարտության տպավորություն է թողնում և չի բացատրվում, որ մեզ հասել է ավելի ծավալուն գրվածքի մի մասը միայն: Սկզբում, ըստ այլաբանության մեկնիչներին հաստուկ կադապարի, Դավթի կանգ է առնում մի քանի սովորական հարցի վրա. ի՞նչ նպատակով է Արիստոտելը գրել իր երկը, ինչո՞վ է այն օգտակար, ի՞նչ հերթականությամբ է նա քննարկում իր խնդիրները, ուրիշ ի՞նչ գործերում է անդրադարձնում դրանց, ինչո՞ւ է վերնագիրը «Վերլուծական», ի՞նչ գլուխների է բաժանված, և ի՞նչ հիմք կա կարծելու, թե այն իրոք պատկանում է Արիստոտելին: Իսկ մեկնության շարունա-

կությունը նվիրված է սիլլոգիզմի («հաւաքումն», «բաղիւսաքումն» կամ «հաւաքաբանութիւն») տարբեր տեսակների վերլուծությանը:

Ինչպես նշվեց, գիրքը նաև ընդգրկում է հավելվածներ ու բառարաններ: Առաջին հավելվածը (էջ 133–175) ներկայացնում է մեկնության հետ բազմաթիվ զուգահեռներ՝ քաղված հունարեն փիլիսոփայական, մեկնողական երկերից ու Դավթի մյուս գրվածքներից: Երկրորդ (էջ 177–183) և երրորդ (էջ 185–187) հավելվածներում գտնում ենք մեկնության մեջ առկա ձևաբանական, շարահյուսական ու բառային հունաբանությունների ցանկեր: Թեև դրանցից մի քանիսը, ինչպես՝ «-իլ» վերջավորությամբ կրավորական անորոշ դերբայը և «-իւր» վերջավորությամբ եզակի երրորդ դեմքով կրավորական անցյալ անկատարն ավելի շուտ ընդհանուր հետդասական քերականական ձևեր են, քան բառիս բուն իմաստով հունաբանություններ, դրանք տեղին են նկատվել, քանի որ լրացուցիչ պատկերացում են տալիս մեկնության լեզվի առանձնահատկությունների մասին:

Գիրքը նաև բովանդակում է եռալեզու՝ հունարեն-հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն-հունարեն ու հայերեն-հունարեն-անգլերեն բառարաններ (էջ 189–212) և ավարտվում գրականության ու Դավթի օգտագործած անձնանունների ցանկերով:

Թոփչյանը դժվար առաջադրանք է կատարել, քանի որ Դավթի մեկնության հայերեն բնագիրը խիստ խրթին է, իսկ հին հունարեն բնագիրը, ինչպես ասվեց, կորած է: Ընթերցողներին մատչելի դարձնելով այս երկը հին հայերեն բնագրի հետ զուգադիր անգլերեն ճշգրիտ թարգմանությամբ՝ Թոփչյանը նշանակալի ծառայություն է մատուցել հայ և հույն դասական գրականության ու փիլիսոփայության պատմության մասնագետներին: Մնում է միայն հուսալ, որ նա կշարունակի իր աշխատանքն այս՝ ջանքեր պահանջող, բայց արգասաբեր գիտական ուղորտում:

ԱԼԵՍԱՆԴԻՐՈ ՕՐԵՆԳՈ
(Իտալիա)